«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ուրարտուի մշակույթը
ԱՌԱՐԿԱ	Պատմություն
ՀԵՂԻՆԱԿ	Քրիստինե Բաղալյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Փյունիկի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն..... **3**

Ուրարտուի մշակույթը..... **4**

Եզրակացություն..... **20**

Օգտագործված գրականության ցանկ..... **21**

Ներածություն

1898-1899 թթ. Արևմտյան Հայաստանում կատարած հնագիտական պեղումների ժամանակ Տարոնի Թրմերդ գյուղում (Մուշից արևելք) Լեման-Հաուպտի հայտնաբերած արձանագրության մեջ Մենուան (մ.թ.ա. 810-786) երկու անգամ հիշատակում է իր արշավանքի ժամանակ հպատակեցրած Ուրմենի-ուխի ցեղը: Այդ անվան մեջ գերմանացի երախտաշատ հնագետը հակված էր տեսնել Տարոնում բնակվող հին արմեններին, որոնք ենթադրաբար այստեղ էին գաղթել Կապադովկիայից: Թրմերդի արձանագրության մեջ ասված է. «Մենուան՝ Իշպուինիի որդին արշավեց Alau-(ni)՝ Ուրմենի ցեղի (երկիրը): Նա ավերեց Alau-(ni)-ն, ջարդեց Ursao-ni-ի (բնակիչներին), գրավեց երկիրը, Ուրմենի ցեղը խոնարհեցրեցե: Ուրմե երկիրը հիշատակվում է նաև Մուշում գտած Մենուայի արձանգրության մեջ:

Մենուայի որդի Արգիշտի I-ը (786-764) իր գահակալության 13-րդ տարում (774թ.) գրված արձանագրության մեջ հիշատակում է դարձյալ Ուրմե երկիրը՝ Արգիշտին գնաց KUR Urme-edi, գրավեց ու կողոպտեց Ուրմեինի երկիրը (KUR Urme-ini) և տղամարդկանց ու կանանց տարավ Վանի երկիրը (KUR Biaina): Համաձայն Սարդուրի II-ի՝ Արգիշտի Ա-ի որդու (764-735), մի արձանագրության, նա ևս արշավել է Ուրմե կամ Արմե երկիրը (KUR Urmeue-edi), գրավել և ավերել է 11 բերդ և քշել տարել է այնտեղից ինը հազար վեց հարյուր ռազմիկ, կին ու դեռահաս: Նշանակում է, արդեն իսկ մ.թ.ա. VIII դարի առաջին կեսից սկսած, ուրարտական սեպագրերը վկայում են, որ արմեացիք (արմենները), որոնք իրենց բնիկ Արձն աշխարհով կոչվում էին նաև Արձնունիներ (Արծրունիներ), հաստատվել են Վանի թագավորությունում՝ Մեծ Աղբակում և շրջակա գավառներում, այսինքն՝ մեկ դար ավելի վաղ, քան Ասորեստանի Սենեքերիմ թագավորի սպանությունը (681թ), որով և հերքվում է Արծրունիների ծագումը Սենեքերիմի հայրասպան որդիներից:

Ուրարտուի մշակույթը ձևավորվել և զարգացել է Հայկական լեռնաշխարհի բրոնզի դարաշրջանի մշակույթի բազմադարյան ավանդների հիմքի վրա՝ կազմելով նրա պատմական բնականոն զարգացման նոր փուլը:

Ուրարտուի մշակույթը

Ուրարտուի անցյալը գիտական աշխարհին հայտնի դարձավ XIX դ. կեսերից՝ շնորհիվ Հայկական լեռնաշխարհի տարածքում հայտնաբերված սեպագիր արձանագրությունների: Այդ արձանագրությունները հայտնի էին դեռևս վաղ միջնադարում (Խորենացի), սակայն գիտակցված չէին որպես պատմական աղբյուր: Եվ միայն XIX-XX դդ. սահմանին, նրանց վերջնական վերծանումից հետո, վեր հանվեց Հայաստանի պատմության լիովին նոր մի էջ:

Ք.ա. IX դ. կեսերին Հայկական լեռնաշխարհում պատմական ասպարեզ իջավ Հին Արևելքի հզոր պետություններից մեկը, որը ասորեստանյան արձանանագրություններից հայտնի է Ուրարտու անունով: Ուրարտացիք իրենց երկիրը անվանում էին Բիայնիլի, Աստվածաշնչում այն հիշատակվում է Արարատյան թագավորություն:

Մ. թ. ա. II հազարամյակի 2-րդ կեսին Հայկական լեռնաշխարհում բնակվող ցեղերը, ըստ այդ ժամանակաշրջանի խեթական, միտաննական և ասորեստանյան գրավոր աղբյուրների, ինչպես նաև հնագիտական տվյ– յալների, արդեն համախմբված էին բազմաթիվ խոշոր ու մանր քաղաքական կազմավորումների մեջ, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր անվանումը, կառավարման մարմինը ցեղային առաջնորդի (իշխանի, արքայիկի) գլխավորությամբ, և առանձին հողատարածքը («սեփական աշխարհը կամ «ազգագավառը»):

Մ. թ. ա. XIV— X դդ. ասորեստանյան սեպագիր աղբյուրներում տեղեկություններ են պահպանվել Նաիրի ընդհանրական անվանումով հայտնի «երկրների» (ցեղային իշխանությունների կամ ցեղապետությունների) մասին: Հիմնականում Տիգրիս և Եփրատ գետերի վերին հոսանքների, ինչպես նաև Վանա լճի մերձակա շրջաններում կազմավորված հայկական ցեղային իշխանությունները, դրացիական և ցեղակցական կապերի հիման վրա, հաճախ սատարել են միմյանց և համատեղ ուժերով դիմակայել ընդհանուր թշնամուն՝ աշխարհակալ Ասորեստանին:

Մ. թ. ա. IX դ. 1-ին կեսից ասորեստանյան սեպագիր աղբյուրներն արդեն վկա-յում են Հայկական լեռնաշխարհի մեկ այլ պետական միավորման՝ «Ուրարտու երկրի»

մասին։ Ասորեստանի Աշշուրնաձիրապալ թագավորի.(մ.թ. ա. 884/883—859) արձանագրություններից մեկում առաջին անգամ հանդիպող Ուրարտու «երկիրը» մատնանշվում է Աուբնատ գետի (Արմ. Տիգրիսի վերին վտակներից մեկի) ակունքների շրջանից, այն է՝ Հայկական Տավրոս լեռնաշղթայից բավականին հյուսիս։

Ուրարտու «երկրի» սկզբնատարածքի մասին առավել որոշակի տեղեկություններ է հաղորդում Ասորեստանի Ալմանասար III թագավորը (մ.թ.ա. 859—824), որը հինգ ռազմական գործողություն է ձեռնարկել հետամտելով կանխել նրա հզորացումն ու ծավալումը։ Ըստ այդ տեղեկությունների, Ուրարտուն Արամէ թագավորի գահակալման օրոք (մ. թ. ա. մոտ 860—840) հս-արմ-ում սահմանակից էր Դայաենի« երկրին» (Տայք «աշխարհին») և Եփրատի ակունքների շրջանին, իսկ նրա հարավային սահմանները տարածվում էին «Նաիրի երկրաց ծովից» (Վանա լիճ) զգալիորեն հյուսիս։ Դրանից ակնհայտորեն բխում է, որ բուն Ուրարտու «երկիրը» նույնանում էր Հայկ. լեռնաշխարհի միշնատարածքը կազմող հնամենի Արարատ կամ Այրարատ «աշխարհին»։ [1]

Քաղաքական այդ կազմավորումը հվ-ից և արմ-ից պատնեշվելով նաիրյան իշխանապետությունների ստվար ցանցով, վտանգազերծվել է Ասորեստանի կործանարար արշավանքներից և ապրել համեմատաբար անխաթար զարգացում։ Մ.թ.ա. IX դ. Արարատյան թագավորությունը հասել է այնպիսի հզորության, որ իր շուրջն է համախմբել Հայկական լեռնաշխարհի ցեղային իշխանությունները և հիմնվել է հայկական առաջին միասնական պետությունը։ Այդ համախմբման ներքին գլխավոր խթանը հղել է դրացի ցեղերի արյունակցությունն ու լեզվական ընդհանրությունը, իսկ արտաքին խթանը՝ ընդհանուր թշնամի Ասորեստանի հարձակումներին համատեղ ուժերով դիմակայելու անհրաժեշտությունը։ Արամեն լեռնային համառ մարտերով խափանել է Ասորեստանի զավթողական նկրտումները և հետևողականորեն ընդարձակել պետության սահմանները։

Մ.թ.ա. 832-ին, երբ Սալմանասար III-ի զորաբանակը ներխուժել է Իշուա «երկիրը» (հին հայկ. Ծոփք «աշխարհը») և գետանցել Արածանին, հանդիպել է

[1] Ղափանցյան Գ. «ՈԻրարտուի պատմությունը», Երևան, 1940թ., էջ 12

Ուրարտուի նոր գահակալ Սարդարի Ա-ի (մ.թ.ա. մոտ 835—824) դիմադրությանը և նահանջել։ Նշանակում է՝ Ուրարտուի հվ-արմ. սահմաններն այդ ժամանակ արդեն հասել են Արածանի գետին։ Օգտվելով մ.թ.ա. 827-ին Ասո– րեստանում սկսված գահակալական կռիվներից, Սարդարի Ա-ն շուտով իր թագավորության հարավային սահմաններն ընդարձակել է մինչև Հայկական Տավրոսի լեռնաշղթան։ Վանա լճի արլ. ափին նա հիմնադրել է արքունի բերդաքաղաք Տուշպան, որն այնուհետև դարձել է պետության ռազմա-քաղաքական գլխավոր հենակայանը հվ-ում՝ ընդդեմ Ասորեստանի։

Իշպուինի թագավորի (մ.թ.ա. մոտ 824—810) և հատկապես նրա որդի Մե– նուայի գահակալման տարիները (մ.թ.ա. մոտ 810—786) հատկանշվել են եր կրի հզորացմամբ, կենտրոնական իշխանության ամրապնդմամբ, արտադրողական ուժերի վերելքով և շինարարական աշխատանքների ծավալմամբ։ Նրանց անուններով հայտնաբերված հարյուրից ավելի արձանագրություններ պատմում են նրկրի տարբեր տեղերում հիմնված քաղաքների, բերդերի, պալատների, տաճարների, ջրանցքների (այդ թվամ՝ Սենուայի ջրանցքի) և այլ կառույցների մասին։

Սենուայի որդու և հաջորդի՝ Արգիշտի Ա-ի գահակալման տարիներին (մ.թ.ա. մոտ 786—764) Արարատյան թագավորությունը հասել է իր ռազմաքաղաքական հզորության բարձրակետին։ Հարավում գլխավոր հակառակորդի՝ Ասորեստանի դեմ վճռական ռազմական գործողություններ ձեռնարկելուց առաջ, Արգիշտի Ա-ն նախ մի քանի պատժիչ արշավանքներով ընկճել է Երիախի (Երասխաձոր), Արանի (Հավանիր), Դիաաեխի (Տայք), Եւոիունի (Ուտիք) և այլ «աշխարհների» ու «ազգագավառների» ըմբոստությունները, ամրապնդել կենտրոնական իշխանության ազդեցությունը տերության հս. շրջաններում։

Այնուհետև զենքն ուղղելով Ասորեստանի դեմ, Արգիշտի Ա նրան դուրս է մղել Հյուսիսային Միջագետքից, Կոմմագենեից և Հյուսիսային Ասորիքից, տիրել Միջերկրածովքի արևելյան և Փոքր Ասիայի հարավ-արևելյան շրջաններով անցնող առևտրական մայրուղիները։

Արգիշտի Ա-ն Ասորեստանի դեմ առանձնապես համառ կռիվներ է մղել (մ.թ.ա. 781—776-ին և 774-ին) հվ-արլ-ում՝ ցեղակից Սանա երկիրը (Կապուտան լճի ընդարձակ ավազանում) միավորելու հետևողական ծրագրով։

Առաջավոր Ասիայում առաջնությանը հարկադրաբար զիջելով Արարատյան թագավորությանը՝ Ասորեստանը նրա դեմ մղել է սոսկ պաշտպանողական մարտեր։ Արգիշտի Ա-ի օրով հիմնվել են Էրեբունի (Երևան) և Արգիշտախինիլի (Արմավիր) բերդաքաղաքները, կառուցվել են մի շարք ջրանցքներ, տաճարներ, պալատներ, շտեմարաններ և այլն։

Պետության վերելքը շարունակվել է նաև Արգիշտի Ա-ի որդու և հաջորդի՝ Սարդարի Բ-ի գահակալման տարիներին (մ.թ.ա. մոտ 764—735)։ Հզորացնելով զինված ուժերը (մասնավորապես՝ արքունի զորագունդը), Սարդարի Բ-ն արտաքին քաղաքականության մեջ հասել է նոր հաջողությունների, շուրջ 20 տարի պահպանել իր տերության առաջնությանը Մերձավոր Արևելքում։ Ասորեստանի Թգլատաալասար III թագավորին հաջողվեւ է Արփադ քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում (մ.թ.ա. 743) պարտության մատնել Սարդարի Բ-ի ն նրա դաշնակիցների միացյալ զորքերը։

Իսկ մ.թ. ա. 735-ին նա պաշարել է Տաշպան, բայց չկարողանալով գրավել այն, նահանջել է՝ ավերելով ու կողոպտելով շրջակա անպաշտպան բնակավայրերը։ Սարդարի Բ-ի որդին՝ Ռուսա II թագավորը (մ. թ. ա. մոտ 735—714), իր ստեղծած նոր ռազմական խմբավորման մեջ ներգրավելով Մուշքինի (Փռյուգիայում), Թաբալի կամ Թոբելի (Կապադովկիայում), խի՝լակկուի (Կիլիկիայում), խատտեի (Մելիտինեի շրջանում) ն Մանայի, ինչպես նան Մանայիև դրացի մի շարք իշխանություններ (Զիգերտու, Կա՝ բալլու, Ալարբրիա, Անդիա, Ուիշդիշ), համառ պայքար է մղել Ասորեստանի դեմ, ընդարձակելով ու ամրապնդելով տերության սահմանները։ Վանա լճի հս-արլ. և Ուրմիա լճի հս-արմ. շրջաններում, հատկապես Արմարիլի (ընդգրկել է մոտավորապես հետագա Գառնի, Առբերանի ն Աղիովիտ գավառների տարածքը) ն Բարի կամ Սանգիբուտու (հայկական Սանգավիթ, Գավեթան կամ Գաբիթյան) գավառներում Ռասա Ա ավարտին է հասցրել դեռևս իր նախորդների օրով հիմնված ն

արքունի տան կրտսեր զարմերին պատկանող խոշոր տնտեսական համալիրը (բերդեր, տաճարներ, պալատներ, այգիներ, պարտեզներ, ջրամբարներ, ոռոգիչ առուներ, շտեմարաններ, ձիաբուծարաններ, Փարախներ և այլն)։ Վանա լճի արլ. շրջանում հիմնադրվել է Ռուսախինիլի բերդաքաղաքը (Թոփրախ– կալե), իսկ լճի հվ. ափին՝ Ուեսի (Ուասի, Ուայաիս) կոչվող արքունի հզոր բերդը (Ռշտունիք գավառի Ոստան բերդաքաղաքի տեղում)։

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ուրարտական մշակույթը, հատկապես քաղաքաշինությունը, ջրանցքների կառուցումը, պալատական համալիրները, պաշտամունքային կառույցները, ճարտարապետությունը, քանդակագործությունը, որմնանկարչությունը, ոսկերչական արվեստը: Ստորև անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին:

Հնագիտորեն ուրարտական մշակույթը սկսեց ուսումնասիրվել ավելի ուշ: XIX դ. վերջի և XX դ. առաջին կեսի փոքրածավալ հետախուզական ուսումնասիրությունները վերածվեցին ավելի մանրամասն և լայնածավալ հնագիտական պեղումների միայն XX դ. երկրորդ կեսից, երբ Հայաստանի Հանրապետությունում, Թուրքիայում (Արևմտյան Հայաստանում) և հյուսիսարևմտյան Իրանում (Պարսկահայքում) հայ-ռուսական, թուրքական և անգլո-ամերիկյան արշավախմբերը մեկը մյուսի ետևից վեր հանեցին հուշարձաններ, որոնց հիման վրա այսօր բավականին ընդհանուր պատկեր է ստեղծվել ուրարտական մշակույթի վերաբերյալ:[2]

Պետական իշխանության տարածքային ընդարձակմանը զուգահեռ, առանձին ցեղերին պատկանող փոքր ու տրոհված ամրոց-բնակատեղիների (բերդշեների) փոխարեն, հաճախ նույն տեղերում կառուցվել են նոր, առավել հզոր քաղաքներ ու ամրոցներ։ Այս ամրացված բնակավայրերը վարչական առանձին շրջաններում և ողջ երկրի մասշտաբով կազմել են միմյանցով պայմանավորված հենակետերի խիտ ցանց։ Ամրոցներով շրջապատված են եղել Տուշպան (Հայկաբերդ, Խարկում, Արալեզք, Անձավի երկու ամրոցները), Մենուախինիլին, Սարդուրիխուրդան և այն բոլոր մեծ

[2] Ուրարտուի հնագիտություն (Ամրոց-բնակավայրեր և դամբանային համալիրներ,Երևան: Երևանի համալս. հրատ., 2008, 12-13 էջ

քաղաքները, որտեղ տեղագրական պայմանները հնարավոր և անհրաժեշտ են դարձրել դրանց կառուցումը։

Քաղաքի գերիշխող բարձունքի վրա կառուցվել է միջնաբերդը՝ պալատական, պաշտամունքային, ռազմական և տնտեսական բաժանմունքներով, իսկ լանջերին և ստորոտում տարածվել են բնակելի թաղամասերը, որոնք ևս հաճախ շրջափակվել են պաշտպանական պարսպով։ Մեկից ավելի բարձրունքների առկայության դեպքում դրանք ամրացվել են միջնաբերդով կամ պաշտպանական հենակետերով՝ ստեղծելով երկկորիզ կամ բազմակորիզ քաշաքաշինական համակարգ (Արգիշտիխինիլի, Անձավ, Հայկաբերդ, Տուշպա-Ռուսախինիլի)։ Արտաքին լայն օղակով քաղաքը շրջապատել են գյուղատնտեսական հողատարածությունները՝ արհեստական ոռոգման ցանցով։

Ջրանցքների կառուցումը եղել է Ուրարտուի պետական գործունեության կարևորագույն բնագավառներից մեկը, որն առավելագույն չափերի է հասել Մենուա արքայի օրոք։ Այդ ժամանակին են վերաբերվում Մենուայի, Մանազկերտի, Բերկրիի և Խոտանլուի ջրանցքները։ Անհրաժեշտության դեպքում կառուցվել են ջրանցքներ և թունելներ։ Ջրանցքներից մի քանիսը (Շամիրամի, Կարմիր բլուրի, Դալմայի) գործում են մինչև այսօր։ Արաքս գետից սկիզբ առնող ջրանցքը անցնում է Արգիշտիխինիլի քաղաքի երբեմնի ջրանցքի ուղեգծով։

Ուրարտուի քաղաքաշինությանը բնորոշ է հասարակական տարբեր խավերին պատկանող թաղամասերի տարածքային որոշակի առանձնացումը։ Այս սկզբունքն է ընկած Ուրարտուի միջնաբերդերի պալատական համալիրների հատակագծերի ձևավորման հիմքում։ Արգիշտիխինիլի քաղաքի արևմտյան միջնաբերդի միջուկն է կազմում մոտ 660 մ^2 մակերեսով սյունազարդ դահլիճը, որը շրջապատում են բնակելի, հանդիսավոր, տնտեսական և այլ բնույթի 21 սենյակներ՝ 3500 մԱ ընդհանուր մակերեսով։ Պալատի հատակագիծը և ներքին բաժանումները հարմարեցված են բլրի գագաթի եզրագծին։ Էրեբունիի պալատը, պահպանելով հատակագծային նույն սկզբունքը, ունի առավել բարդ, բազմակենտրոն և բազմաբջիջ հորինվածք։ Բացի կենտրոնական սյունազարդ բակից, այնտեղ կան նաև մի այլ ներքին բակ և դահլիճ, որ ստեղծում են առաջինի նկատմամբ ստորադաս կենտրոններ՝ շրջապատող

սենյակներով։ Սյունազարդ բակի հարավ-արևմտյան մասում կառուցված է պալատական տաճար՝ «Սուսինե։

Մինչև այժմ բացահայտված տաճարները, ըստ հատակագծային և տարածական ձևերի, դասակարգվում են երեք խմբի։

Քառակուսի հատակագծով և անկյունային որմնահեցերով աշտարակաձև ոչ մեծ տաճարները, որպիսիք հայտնաբերվել են Թոփրակ-կալեում, Ազնավուր-թեփեում, Կայալիդերեում, Չաուշ-թեփեում և Ալթըն-թեփեում։ Վերջինս, ի տարբերություն մյուսների, կառուցված է 2728 մ չափերի բակում, որին կից կան նաև օժանդակ սենյակներ։

Հաջորդ խմբին պատկանող տաճարի նմուշ է Էրեբունիի «Սուսիե տաճարը, որը ունի 13,5 մ չափերի պարզ ուղղանկյուն հատակագիծ՝ երկայնական առանցքի վրա տեղադրված մուտքով։ Այս խմբին է վերաբերվում նաև Մուսասիրի տաճարը, որը հայտնի միայն Սարգոն Բ արքայի պալատում գտնված բրոնզե թիթեղի ռելիեֆ պատկերով։

Երրորդ խումբը բնորոշվում է ուղղանկյուն, լայնական ուղղությամբ զարգացած հատակագծով։ Այդպիսին է Էրեբունիի Խալդի աստծուն նվիրված տաճարը, որն ունի մեծ և երկարավուն դահլիճ, բաց սյունասրահ, օժանդակ սենյակ և աշտարակ՝ ներքին աստիճանավանդակով։

Ուրարտական մշակույթի տեսակարար կշիռը, սակայն, անընդհատ աճում է և նրա ճարտարապետության, շինարարական տեխնիկայի, կիրառական արվեստի, հատկապես մետաղագործության ու խեցագործության առաջատար նշանակությունը դժվար է այլևս անտեսել։ Ուրարտական ժառանգության դրսևորումները աքեմենյան մշակույթի մեջ նպատակահարմար է խմբավորել ըստ թեմաների։

Առանձնակի կարևորություն է ներկայացնում ճարտարապետության ուսումնասիրումը, որը դիտարկվել է պատմահամեմատական վերլուծության միջոցով։

Կարմիր բլուրի միջնաբերդի պեղումները ցույց են տալիս, որ ուրարտական ճարտարապետության հատակագծային կոմպոզիցիայի համար մասամբ բնորոշ են նեղ և երկար սենյակները:[3]

Սակայն վերջին տարիներին, հատկապես Արին-բերդում, ինչպես և Կարմիր-բլուրի քաղաքային թաղամասում կատարված աշխատանքներից երևում է, որ ուրարտական ճարտարապետությանը խորթ չէին նաև սյունազարդ սենյակները: Այդ մասին կարելի էր կռահել դատելով մի շարք այնպիսի տվյալներից, ինչպիսիք են՝ սյան տարբեր մասերի մնացորդները (Արմավիր, Արինբերդ, Տաշբուրուն), սյունաշարքի գոյությունը տաճարական շենքերի շուրջը, սյունազարդ ներքին բակը (14 սյունանոց, Արին-բերդն հատկապես Թեյշեբաինիի բնակելի տների սենյակների ծածկերը կամ բակերի կիսատ ծածկերը կրող սյուների քարե խարիսխները:[4]

Ուրարտական ճարտարապետությունը ստեղծել է տաճարային կառույցների մի շարք ձևեր, որոնք պեղումներից գտնված օրինակներից բացի, հայտնի են նաև սեպագիր աղբյուրներից: Ուրարտական արձանագրություններում հիշատակվում են աստվածություններին ձոնված մի քանի շինությունների անուններ, ինչպես՝ E”, E”.BAR, E”.BAR ŠA.DI, E”.BAR TUR, susi, iarani, KA” (šeštili), E”ašihuse: E” գաղափարագրով նշանակվել են ինչպես աշխարհիկ, այնպես և պաշտամունքային կառույցները:[5]

Թեև ուրարտական սեպագիր արձանագրություններում հիշատակվում են տաճարների բազմաթիվ ձևեր, սակայն դրանց հատակագծային հորինվածքները, ըստ Կ.Հովհաննիսյանի, երեքն են՝

- ուղղանկյուն հատակագծով՝ երկայնական առանցքով,
- ուղղանկյուն հատակագծով՝ լայնական առանցքով,
- քառակուսի:[6]

---

[3] К. Л. Оганесян , Архитектура Тейшебаини (Кармир-блур, IV), Ереван, 1955, էջ 64

[4] Տիրացյան Գ.Ա. «Ուրարտական քաղաքակրթությունը և Աքեմենյան Իրանը», Երևան, 1964թ., էջ 150

[5] Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 65

[6] Հայկական ճարտարապետության պատմություն, Հ1, Երևան,1996, էջ 162

Երկայնական հատակագծով տաճարների տեսակին է պատկանում ուրարտական սեպագիր արձանագրություններում հիշատակվող susi տաճարը: Հայտնի է, որ susi հիմնականում ձոնվել է Խալդի աստծուն (բացառությամբ մեզ հայտնի երկու դեպքի. առաջինը ձոնված է Իվարշա աստվածությանը՝ Էրեբունիում, իսկ մյուս տաճարը ձոնված է Իրմուշինի աստվածությանը՝ Չաուշ-թեփեում):

Ենթադրվում է, որ Խալդիին ձոնված susi տաճարներում իրագործվել են ինչպես Խալդիի կնոջը՝ Ուարուբաինիին, այնպես էլ այլ աստվածություններին նվիրված ծիսական արարողություններ, ինչպես դա վկայում է Միերի դռան արձանագրությունը:[7]

Կարծիք կա, որ Մուծաձիրի (ուրարտական Արդինի) քաղաքի Խալդիի տաճարը ևս պատկանել է ՝սուսի՝ տաճարային տեսակին, որը թեև մեզ հայտնի է միայն իր գլխավոր ճակատի հարթաքանդակի ձևով, բայց այն ևս դասվում է երկայնական հատակագծով կառույցների շարքին: Մուծաձիրի տաճարը, որը նվիրաբերված էր երկրի գլխավոր աստծուն՝ Խալդիին, կառուցված էր հենց նրա պաշտամունքի կենտրոնը հանդիսացող Մուծաձիր քաղաքում, որ և հավանաբար, ողջ Ուրարտուի պաշտամունքի կենտրոնն էր: Մուծաձիրի տաճարի վերաբերյալ մենք ենթադրություններ ենք անում՝ ելնելով Սարգոն II արքայի Դուր-Շարուկինի (այժմյան Խորսաբադ՝ Իրաք) պալատի XII դահլիճի պատին պահպանված բարձրաքանդակից, որը պատկերում է Մուծաձիրի տաճարի թալանը Սարգոն II-ի զորքերի կողմից: Տաճարը երևում է միայն դիմային կողմից՝ բարձր, աստիճանավոր հարթակի վրա, դիմային պատին կից սյուներով կամ որմնահեցերով, երկթեք ծածկով, որի վրա Խալդիի պաշտամունքային խորհրդանիշը հանդիսացող նիզակ է կամ կենաց ծառ:

Ուրարտական ճարտարապետության մեջ ամենավիճելի հարցը Մուծաձիրի տաճարի արտաքին տեսքի և տեղադրությանը վերաբերող խնդիրն է: Ինչ վերաբերում է տաճարի արտաքին տեսքին և ճարտարապետական հորինվածքներին, ապա տեսակետները խիստ բազմազան են: Մի տեսակետի համաձայն Մուծաձիրը ներսից

[7] Հմայակյան Ս., Պաշտամունքային շինությունները, քրմությունը, ծեսերը և տիեզերքի եռամասնության մասին պատկերացումները Ուրարտուում, Պատմա-բանասիրական հանդես-1986/1 (112), էջ 113

ընդարձակ տարածքով, արտաքինից սյունաշար, երկթեք տանիքով կառույց պետք է որ լիներ, որի վրա ամրացված է Խալդիի պաշտամունքային խորհրդանիշը հանդիսացող նիզակ:

Այս տեսակետն է պնդում նաև Կ. Տրևերը, ով գտնում է, որ տաճարը ունեցել է երկթեք տանիք (ինչը, ըստ նրա, հատուկ էր Առաջավոր Ասիայի և Միջերկրական ծովի արևելյան ավազանի տաճարներին և դամբարաններին), դիմային մասից 6 սյուներ, չնայած առկա չէ ոչ խոյակ, ոչ անտամբալմենտ, ոչ էլ քիվ:

Թ. Օզգյուչը, սակայն, կարծում է, որ տաճարը պետք է որ ունենար հարթ ծածկ, որի լուսավորումը կատարվում էր բարձր պատի վրայի պատուհաններից, տանիքի անցքից, դռան անցքից կամ այդ երեքից միաժամանակ:[8]

Կա մեկ այլ տեսակետ, ըստ որի կառույցի բարձր հարթակը իր առջև ու ամբողջ լայնությամբ պետք է ունենար աստիճաններ, որոնք տաճարին հաղորդում էին հանդիսավորություն և մոնումենտալություն: Այս տեսակետի համաձայն տաճարը պետք է ունենար երդիկանման պատուհան, որտեղից էլ, ըստ երևույթին, լուսավորվել է տաճարի ներսը:[9]

Սակայն ինչպես կարծում է Վ. Քլայսը, Մուծաճիրի տաճարը շրջապատված էր ոչ թե սյուներով, այլ որմնահեցերով, տաճարն ուներ երկթեք տանիք և ըստ երևույթին տաճարին կից աշտարականման կառույց: Ինչ վերաբերում է Մուծաճիրի տաճարի ճարտարապետական լուծումներին, ապա մենք, քննարկելով առկա բազմաթիվ տեսակետները, գտնում ենք, որ Մուծաճիրի տաճարը հավանաբար ունեցել է ուղղանկյուն հատակագիծ, երկթեք տանիք (որը, ըստ երևույթին, կառուցվել էր փայտե հեծաններով, եղեգով և կավով): Հավանաբար տաճարը շրջապատված է եղել որմնահեցերով: Պեղված բազմաթիվ ուրարտական տաճարներից դեռևս հայտնի չէ որևէ օրինակ, որը տաճարին կից սյունաշար ունենա: Ուստի քիչ հավանական ենք համարում Բ. Պիոտրովսկու և Կ. Տրևերի այն տեսակետը, որ Մուծաճիրի տաճարը եղել է հին հունական տաճարների նախատիպը:

---

[8] К.В.Тревер – Очерки по истории древней Армении, Москва-Ленинград, 1953, стр. 74.

[9] Հայկական ճարտարապետության պատմություն, Հ1, Երևան,1996, էջ 165

Դատելով Մուծածիրի տաճարի պահպանված գծանկարներից՝ որմնահեցերը զարդարվել են մեծ չափերի վահաններով, իսկ մուտքի երկու կողմերում կանգնեցվել են տաճարի չափերը գրեթե երկու անգամ գերազանցող բարձր նիզակներ (որոնք, կարծում ենք, պետք է որ ունենային դեկորատիվ կամ ծիսական նշանակություն) և հսկայական չափերի հասնող կարասներ (որոնք, համաձայն Սարգոն II-ի թողած արձանագրության, ուրարտական թագավորները լցնում էին աստվածներին զոհաբերելու համար նախատեսված սրբազան հեղուկով՝ գինով): Տաճարն ըստ երևույթին կառուցվել է հում աղյուսից և ներսից զարդարված է եղել որմնանկարներով: Հայտնի է, որ ուրարտական բոլոր տաճարները զարդարված են եղել որմնանկարներով, հետևաբար երկրի գլխավոր տաճարը պետք է որ բացառություն չկազմեր:[10]

Տաճարն ըստ երևույթին ունեցել է նաև երդիկանման բացվածք, որտեղից էլ, ըստ երևույթին, լուսավորվել է: Դա է ապացուցում նաև Դուր-Շարուկինի բարձրաքանդակի մի տեսարան, որտեղ պարզ երևում է, թե ինչպես է Սարգոն II-ի զինվորներից մեկը պարանով բարձրանում դեպի տաճարի տանիքը: Այստեղից էլ, հավանաբար, ներս են խուժել ասսուրական բանակի զինվորները: Տաճարը, ամենայն հավանականությամբ, ընդարձակ համալիր էր, որտեղ պաշտամունքային շինությունից բացի՝ կային նաև աշխարհիկ, տնտեսական, արտադրական և պահեստային կառույցներ: Այնպիսի մեծ քանակությամբ ավարը, որ Սարգոն II-ի զորքերը թալանել են Մուծածիրից, պետք է որ տեղավորված լիներ բավական մեծ շինության մեջ, որը Մուծածիրի փոքր չափեր ունենալու պարագայում պարզապես անհնար կլիներ: Ըստ Սարգոն II-ի արձանագրության՝ նա տաճարից տարել է 672 ջորի և ավանակ, 920 գլուխ խոշոր եղջերավոր անասուն և 100225 գլուխ ոչխար, 38 տաղանդ և 18 մինա ոսկի, 160 տաղանդ և 2 մինա արծաթ, արճիճ, պղինձ, բազմազան կտորեղեն, սպասք և վերջապես ցլի, կովի և հորթի պղնձե արձաններ: Սարգոն II-ի արձանագրությունից պարզ է դառնում, որ նա այս հարստությունից բացի տաճարից

[10] Б.Б. Пиотровский, История и клуьтура Урарту, Ереван, 1944, стр. 252

հափշտակել է նաև Խալդի աստծուն և նրա կնոջը, ինչպես նաև ՝Խալդիի զենքը՝ (BE-LI MEŠ), որին ևս, համաձայն Միեր դռան արձանագրության, մատուցվել են զոհեր:

Ինչ վերաբերում է տաճարի տեղադրությանը, ապա այն ևս վիճելի հարցերից է, քանի որ մինչ օրս չեն գտնվել ոչ տաճարի մնացորդները և ոչ էլ որևէ գրավոր տեղեկություն, որոնք որևէ հավաստի լույս կսփռեին այս հարցերի վրա:

Ինչպես գտնում է Կ. Հովհաննսիյանը, Մուծածիրը պետք է որ գտնվեր Նինվեից 120 կմ հյուսիս-արևելք, Վանա լճից հարավ-արևելք՝ ժամանակակից Ռևանդուզ քաղաքի շրջակայքում: Ս.Հմյակյանը Մուծածիրի իշխանությունը տեղադրում է Ուրմիա լճից հարավ-արևմուտք՝ Մեծ Զաբ և Փոքր Զաբ գետերի միջև ընկած տարածքում՝ այժմյան Ռևանդուզ քաղաքի շրջակայքում, իսկ քաղաքը՝ այժմյան Մուջեսիր գյուղի մոտ:[11]

Բ. Պիոտրովսկին գտնում է, որ չնայած Մուծածիր երկիրը մեծ չի եղել, այնուամենայնիվ այն արևմուտքում ձգվել է մինչև Ռևանդուզ, հարավում՝ չի անցնել Թոփուզավայից և միայն հյուսիսում՝ այն կարող էր տարածվել լեռների խորքը: Ըստ նրա, Մուծածիրը գտնվում էր Կելյաշինի մոտ, առավել ևս, որ այստեղ դեռևս պահպանվել են համաժամանակյա բերդի և քարե այլ կառույցների ավերակներ[xviii]: Կ. Լեման Հաուպտը, ով Մուծածիր անվանումը ասսուրերենից ստուգաբանում է որպես ՝օձի ելք՝ (muša-šir), կարծում է, որ այդ ՝օձի գլուխը՝ համապատասխանում է Սիդեկանին, որտեղ միախառնվում են Բոռա և Թոփուզավա գետերը:

Անդրադառնալով Մուծածիր քաղաքի տեղադրության հարցին, մենք կարծում ենք, որ այն, ըստ երևույթին, գտնվել է Ռևանդուզ քաղաքի շրջակայքում, քանի որ ինչպես երևում է բարձրաքանդակից, տաճարը կառուցված է բլրաշատ վայրում, ինչը լիովին համապատասխանում է Ռևանդուզի ներկայիս տեղանքին:

Ինչ վերաբերում է տաճարի ունեցած կրոնական դերին, ապա ինչպես կարծում է Ս. Հմայակյանը, այն դժվար թե եղած լիներ երկրի հոգևոր կենտրոնը, քանի որ դժվար է պատկերացնել, որ պետության պաշտամունքային կենտրոնը եղել է մի

[11] Ավետիսյան Հայկ, Ավետիսյան Պավել, Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI-VI դարերում, Երևան, 2006, էջ118

քաղաք, որը չի գտնվել այդ երկրի կազմում: Համենայն դեպս, երբ կազմավորվում էր պետությունը, Մուծածիրը անկախ մի իշխանություն էր ու միայն Իշպուինի և Մենուա արքաների համատեղ գահակալության տարիներին է, որ Մուծածիրը դառնում է Ուրարտուից կախյալ իշխանություն՝ պահպանելով իր ինքնուրույնությունը: Ըստ նրա՝ Մուծածիրը եղել է թագավորական տոհմի համար կարևոր նշանակության մի շրջան, իսկ երկրի հոգևոր կենտրոնը գտնվել է այլ վայրում, ամենայն հավանականությամբ, մայրաքաղաք Տուշպայում, որտեղ և գտնվել է ուրարտական պետության ամենակարևոր պաշտամունքային շինությունը՝ Միերի դուռը՝ արձանագիր կոթող, որին ներկայացված են ուրարտական բոլոր աստվածությունները, նրանց մատուցվող զոհերի տեսակները և չափը:

Ս. Հմայակյանի այս տեսակետը, կարծում ենք՝ թերի է, քանի որ ուրարտական արքաների թագադրման ծեսի հետ կապված ուսումնասիրություններից տեղեկանում ենք, որ ուրարտական արքաները թագադրման օրն այցելում էին Մուծածիր: Դա տեղի էր ունենում հերթական սեզոնային այցելության ժամանակ, որտեղ մեծ տոնախմբություն էր կատարվում, հազարավոր կենդանիներ էին զոհաբերվում և այս տոնախմբություններին մասնկացում էր նաև ժողովուրդը: Պատահական չէ, որ ուրարտական արքաները թագադրության համար ընտրում էին հենց Մուծածիրի տաճարը, որը գտնվում էր ախոյան Ասորեստանի սահմանից ոչ շատ հեռու: Օ. Բելլին կարծում է, որ Մուծածիրի Խալդիի տաճարը ունեցել է կարևոր ռազմավարական նշանակություն ինչպես ուրարտացիների և ասորեստանցիների, այնպես և ողջ Հին Մերձավոր Արևելքի համար: Մի կողմից այն ունեցել է կարևոր հանքային ռեսուրսներ, մյուս կողմից գտնվել է մեծ առևտրական ճանապարհների վրա, որը անցնում էր Աֆղանստանով, Հնդկաստանով, հյուսիս-արևմտյան Իրանով: Ուստի, հիմնավորված ենք համարում այն փաստը, որ Մուծածիրը մինչև Արգիշթիի II-ի կառավարման շրջանի ավարտը եղել է երկրի հոգևոր կենտրոն: Հայտնի է, որ նրա հաջորդ՝ Ռուսա II-ի իշխանության շրջանում Ուրարտուում կառուցվում է Խալդի աստծո պաշտամունքի

նոր կենտրոն՝ Ռուսախինիլի Քիլբանիկային, որը նաև տերության նոր մայրաքաղաքն էր:[12]

Ուրարտուի քանդակագործության՝ մեզ հասած մեծածավալ միակ նմուշն է Վանում գտնված բազալտե արձանը, որի ստորին և վերին մասերը կոտրված են:[2] Խաչված ձեռքերում կան մտրակ, նետ և աղեղ, իսկ ուսից կախված է սուր: Արձանի իրանը մշակված է գծային հարթաքանդակի սկզբունքով, ձևերի ընդհանրացմամբ՝ առանց մանրամասների: Ենթադրվում է, որ այն վաղ շրջանի արքաներից մեկի քանդակն է: Նույն ոճով կատարված տուֆե, համեմատաբար փոքր կուռքեր են գտնվել Արգիշտիխինիլիի առանձնատների պեղումների ժամանակ: Սարդուրի Բ և Արգիշտի Ա արքաների բրոնզաձույլ մեծածավալ արձանների վերաբերյալ հիշատակություն կա Սարգոն Բ-ի արձանագրությունում, որտեղ նկարագրվում է Մուսասիրի գրավումը: Ուրարտուի արվեստի այս բնագավառի վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում են տալիս բրոնզե, քարե և փղոսկրե բազմաթիվ փոքր քանդակները, որոնք հայտնաբերվել են Վանում, Թոփրակ-կալեում, Կարմիր բլուրում, Ալիշարում: Բրոնզե արձանիկներ եղել են գահերի մասեր, ծիսական կաթսաների բռնակներ և պատկերել են երևակայական կենդանիների, առյուծների, ցուլերի վրա կանգնած աստվածություններ, մարդկային դեմքով թևավոր առյուծներ, ցուլեր, թռչուններ: վերջիններիս գլխամասերը ներդրված են սպիտակ, իսկ իսկ աչքերը և հոնքերը՝ սև քարերով: Իրանը պատված է ոսկե թերթիկներով: Բրոնզի քանդակագործության և դրվագման նշանավոր նմուշներ են Կարմիր Բլուրում հայտնաբերված վահանները, կապարճները և սաղավարտները: Վահանների վրա պատկերված են մի քանի համակենտրոն օղակներ՝ առյուծների և ցուլերի, կրկնվող ֆիգուրներով, կապարճների վրա՝ հեծյալների և մարտակառքերի պատկերներ, իսկ սաղավարտները, որ կրում են Արգիշտի Ա-ի և Սարդուր Բ-ի այձանագրությունները, ճակատի մասում երեք շարքով պատկերում են կենաց ծառի առջև կանգնած քրմեր՝ շրջապատված առյուծագլուխ վիշապներով: Սաղավարտի ծոծրակի մասում քանդակված են հեծյալներ և

[12] Գրեկյան Ե., Դրվագներ Ուրարտու-Մուծածիրյան հարաբերությունների պատմությունից, ՄՄԱԵԺ, XXIV, Եր., 2005, էջ 288

մարտակառքեր: Չնայած փոքր չափսերին, այս արձանիկները և ռելիեֆ պատկերները իրենց կեցվացքով և ոճով ունեն Ուրարտուի ողջ արվեստին բնորոշ վեհությունը և մոնումենտալությունը:

Միջնաբերդերում սյունազարդ բակերի, դահլիճների, հանդիսավոր սենյակների և տաճարների պատերը ձևավորել են աշխարհիկ և պաշտամունքային բնույթի որմնանկարներով, որոնց հորինվածքային գերիշխող սկզբունքն է եղել պատերի ողջ պարագծով տարված և կրկնվող տարրերով պատկերագոտիները՝ միմյանցից բաժանված զարդաերիզներով: Սպիտակ հիմնաներկի վրա կիրառվել են կապույտ, կարմիր, դեղին, սև և հազվադեպ կանաչ ներկեր: Որմնանկարների լավագույն նմուշները պահպանվել են Էրեբունիում, Թեյշեբանիում, Ալթըն-թեփեում:[3]

Պաշտամունքային բովանդակությամբ որմնանկարներում, որտեղ պատկերված են առյուծի կամ ցուլի վրա կանգնած աստվածություններ, կենաց ծառի երկու կողմերում կանգնած քրմեր, առյուծ, ծնկաչոք ցուլ, արևի խորհրդանշան և այլն, ֆիգուրներն ունեն անշարժ և հանդիսավոր դիրք:

Պահպանվել են ոսկերչական արվեստի բազմաթիվ նմուշներ, գահին նստած աստվածուհու պատկերով մեդալիոն (Թոփրակ-կալե), արծաթե մեդալիոն և ոսկով դրվագված արծաթե կափարիչ (Կարմիր բլուր), արծաթե և բրոնզե մատանիներ, կոճակներ և այլն:

Ուրարտական արհեստների մեջ առանձնահատուկ զարգացման էր հասել քարագործությունը: Քարը լայնորեն օգտագործվում էր շինարարության, տնտեսության, կենցաղի և արվեստի մեջ: Այդ են վկայում պեղումներից հայտնաբերված քարե առարկաները՝ արձանագրություններ, աղորիքներ, հավանգներ,սանդեր, վարսանդներ, կոկիչներ, սրաքարեր, թասեր, կուռքեր, զարդեր: Նախաուրարտական շրջանի խեցեգործության հարուստ ավանդույթի հիման վրա ուրարտական խեցեգործությունը հասավ առավել բարձր զարգացման և արհեստներից առաջատարն էր համարվում Էրեբունիում և Թեյշիբաինիում: Ունենալով լայն կիրառություն՝ խեցեգործությունը տարածում էր գտել պաշտամունքի, տնտեսության և կենցաղի բոլոր ճյուղերում: Ուրարտական կերամիկական ապրանքների մեծ մասը

պարզ էին,առանց այլ հնագույն մշակույթներին հատուկ զարդանախշերի: Ինչպես Հին աշխարհի այլ պետություններում, կերամիկան Ուրարտուում շատ տարածում ուներ: Կերամիկական սափորները օգտագործվում էին մթերք պահելու և տարբեր կենցաղային կարիքների համար: [13]

Նյութական մշակույթի ուսումնասիրման բնագավառում դեռևս լուծմանընթացքում է «Ուրարտու-Հայաստան» խնդիրը, համաուրարտական մշակույթի տեղային տարբերակների բացահայտման, «վերնախավային» և«զանգվածային» մշակույթների հարաբերակցության հարցերը են:Կարևորվում է այսպես կոչված «ուրարտական էքսպանսիային» համընթաց ձևավորող նոր իրողությունների՝ քաղաքական, ռազմական, տնտեսական համակարգերի, վարչա-տարածքայինստորաբաժանումների, սոցիալական կազմի և դրանցով պայմանավորվածուրարտական թագավորության՝ որպես տերության կազմավորման «մեխանիկան» վեր հանելու խնդիրը:

Ընդ որում, «ուրարտական էքսպանսիա» ասելով՝ նկատի ունենք ոչ միայն ռազմական նվաճումները, այլև մշակույթային նոր իրողությունների տարածումն ու արմատավորումը տարածաշրջանում: Կարմիր Բլուրի պեղումներից հետո հատուկ ուսումնասիրության առարկա դարձան ուրարտասկյութական փոխառնչությունները, սակայն դրանց բունընթացքը դեռևս լիովին պարզաբանված չէ:

Այնուամենայնիվ, լայնածավալ պատմա-հնագիտական աշխատանքները նորանոր ճանապարհներ են բացում վերոհիշյալ խնդիրների պարզաբանման համար: Այս ակնարկում մեր նպատակն է ներկայացնել ուրարտական նյութական մշակույթին, մասնավորապես ճարտարապետությանը վերաբերող իրավիճակը:

[13] Ходжаш С. И., Трухтанова Н. С., Оганесян К. Л. Эребуни. Памятник Урартского зодчества VIII—VI в. до н. э., «Искусство», Москва, 1979

Եզրակացություն

Այսպիսով, ուրարտական մշակույթը առաջացել և իր զարգացման հետագա ընթացքն է ստացել բրոնզի դարաշրջանում: Զարգացումն ընթացել է բազմաթիվ խոչընդոտներով, սակայն ուրարտական մշակույթի մինչև օրս էլ հայտնաբերվող բեկորները վկայում են այն մասին, որ այն եղել է տվյալ ժամանակաշրջանի զարգացած մշակույթներից մեկը: Ուրարտական մշակույթը առանձնանում է քաղաքաշինության, ջրանցքների, պալատական համալիրների, պաշտամունքային կառույցների, քանդակագործության, որմնանկարների, ոսկերչական արվեստի մեջ:

Նախկինում ավերված պետական տարածքներին փոխարինելու էին գալիս նոր, առավել հզոր քաղաքներ և ամրոցներ: Այս ամրացված բնակավայրերը վարչական առանձին շրջաններում և ողջ երկրի մասշտաբով կազմել են միմյանցով պայմանավորված հենակետերի խիտ ցանց: Ուրարտական զարգացած քաղաքաշինության մասին վկայում էին ամրոցներով շրջապատված Տուշպան՝ Հայկաբերդ, Խարկում, Արալեզք, Անձավի երկու ամրոցները), Մենուախինիլին, Սարդուրիխուրդան և այն բոլոր մեծ քաղաքները, որտեղ տեղագրական պայմանները հնարավոր և անհրաժեշտ են դարձրել դրանց կառուցումը: Ուրարտուի պետական գործունեության կարևորագույն գործառույթներից էր համարվում ջրանցքների կառուցումը, որի վառ ապացույցն են Մենուայի, Մանազկրտի, Բերկրիի և Խոտանլուի ջրանցքները:

Ուրարտուի քաղաքաշինությանը բնորոշ է հասարակական տարբեր խավերին պատկանող թաղամասերի տարածքային որոշակի առանձնացումը: Այս սկզբունքն է ընկած Ուրարտուի միջնաբերդերի պալատական համալիրների հատակագծերի ձևավորման հիմքում: Տաճարների հատակագծերը ըստ հատակագծային և տարածական ձևերի, բաժանվում են երեք խմբի՝ Քառակուսի հատակագծով և անկյունային որմնահեցերով աշտարակաձև ոչ մեծ տաճարները, պարզ ուղղանկյուն հատակագիծ, ուղղանկյուն, լայնական ուղղությամբ զարգացած հատակագծով: Ուրարտուի զարգացած քանդակագործության վառ ապացույց է Վանի բազալտե արձանը, որը մեզ է հասել կիսակոտրված, սակայն նույնիսկ առանց ստորին և վերին մասերի այն իրենից ներկայացնում է քանդագործության հրաշք նմուշ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ղափանցյան Գ. «ՈՒրարտուի պատմությունը», Երևան, 1940թ
2. Ուրարտուի հնագիտություն (Ամրոց-բնակավայրեր և դամբանային համալիրներ,Երևան: Երևանի համալս. հրատ., 2008
3. Տիրացյան Գ.Ա. «Ուրարտական քաղաքակրթությունը և Աքեմենյան Իրանը», Երևան, 1964թ
4. Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990
5. Հայկական ճարտարապետության պատմություն, Հ1, Երևան,1996
6. Հմայակյան Ս., Պաշտամունքային շինությունները, քրմությունը, ծեսերը և տիեզերքի եռամասնության մասին պատկերացումները Ուրարտուում, Պատմա-բանասիրական հանդես-1986/1 (112), էջ 113
7. Հայկական ճարտարապետության պատմություն, Հ1, Երևան,1996
8. Ավետիսյան Հայկ, Ավետիսյան Պավել, Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI-VI դարերում, Երևան, 2006
9. Գրեկյան Ե., Դրվագներ Ուրարտու-Մուծաձիրյան հարաբերությունների պատմությունից, ՄՄԱԵԺ, XXIV, Եր., 2005
10. К.В.Тревер – Очерки по истории древней Армении, Москва-Ленинград, 1953
11. К. Л. Оганесян , Архитектура Тейшебаини (Кармир-блур, IV), Ереван, 1955
12. Б.Б. Пиотровский, История и клуьтура Урарту, Ереван, 1944
13. Ходжаш С. И., Трухтанова Н. С., Оганесян К. Л. Эребуни. Памятник Урартского зодчества VIII—VI в. до н. э., «Искусство», Москва, 1979